ՑՈՒՑԱԿ

ՊԵՌԼԻՆԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱՑ

Այս ցուցակս աշխատասիրաբար գրած է, 'ի խնդրոյ Հ. Ղեւոնդի Ալիշան՝ Պարոն Նիկողոս Քարամեանց, նախկին աշակերտ Տփղիսու Ներսիսեան վարժարանին, ուր եւ ուսուցիչ ըլլալու համար ղրկուած է 'ի Գերմանիա, եւ յաջողութեամբ՝ սահմանեալ ուսմանց կարգն աւարտելով՝ վարժապետական աստիճան ալ առեր է, քանի մ'այլ գիտնական ճառեր խօսած եւ գրած է գերմաներէն լեզուաւ։

Ցուցակիս ձեռագրաց միջին *Թիւք* կը նշանակեն այն Թիւերը՝ որով իւրաքանչիւր գիրք նշանակուած կամ անուանուած են այն գրատան ընդհանուր որ եւ է լեզուաւ (կամ արեւելեան) ձեռագրաց կարգին մէջ. իսկ անոնց քովի 4° կամ 8° կամ 12° Թիւերն կը նշանակեն գրոց մեծութեան չափը, քառածալ կամ ութածալ կամ երկոտասանածալ ըլլալը։

1. Թիւ 11. 4°

Երգարան։ — 2. Տետրակ։ — 3. Կարգ ժամամուտրու. — Ճաշոց (ձայնագրեալ)։ Յիշատակարան Տետրակին․ «Փառք պատիւ .... գրեցաւ և յանգ ելեալ աւարտեցաւ տետրակս յետ երգարանիս ՉՁՁ հայկազեան թուոյ։ Եւ փոքր թուին ՄԾԴ։ Իսկ յաշխարհական ղանութեան սուլթան Մահմուտին։ Եւ 'ի թագաւորութեան Հայոց Լեւոնի չորրորդի։ Եւ 'ի հայրապետութեան տեառն Յակոբայ։ Եւ յիշխանութեան տանն Սիսական՝ մեծ սպարապետին Հայոց և Վրաց՝ Պարոն Բիւրթէլին և զաւակացն իւրոց Պէչքէնի և Իվանէի, որք յՕրպելեանց։ Եւ 'ի լուսաւոր վարժապետութեան մեծին Եսայեա»... Գրեալ 'ի պէտս Մետրապօլիտ Սարգիս եպիսկոպոսի, ոսկեայ գեղեցիկ երկաթագիր. 'ի վերջ տետրակին. «Մեծ մետրապօլիտն Սինեաց զտէր Սարգիս զստացող տետրակիս յիշեցէք 'ի Քրիստոս»։

Այլ ձեռօք 'ի ճակատ Երգարանին․ «Զվերջին ստացող սուրբ երգարանիս ըզտէր Մանուէլ եպիսկոպոսն, որդի պարոն Աւագին, թոռն պարոն Սցիգրէկին, որ գնեց զտետրակս 'ի հալալ ընչից իւրոց, թվականին ՁՍ, յիշեցէք 'ի Քրիստոս».

2. Թիւ 12. 4°.

Աւետարան. «Զապիրատ գրիչս Եփրեմ կրօնաւոր, զծնօղս իմ յիշել աղաչեմ»։

3. Թիւ 164. 4°.

1. Պատմութիւն սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինու պատրիարգի, և տիեզերալոյս եպիսկոպոսապետի և վարդապետի. ծննդեանն, սննդեան և քաղաքավարութեան։ — Թերթ 135ա։ Այլ պատմութիւն 'ի սուրբ գրոց. Վասն ժամանակի նեղութեան նեղելոյն զԵրուսաղէմ. (ժամանակագրութիւն 'ի Նաբուգոդոնոսորայ մինչև ցծնունդն Քրիստոսի)։ Թերթ 145ա։ Պատմութիւն սրբոյն Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին, ծննդեան, սննդեան և առաքինի վարուց, և ամենայն սքանչելեացն և կատարմանն. մեծ քահանայապետին և Զմիւռնոյ արքեպիսկոպոսին, որ է 'ի նահանգին Լիկէացոց մայրաքաղաք, և այժմ Իզմիր կոչի»։ — Թերթ 196բ. «Գրեցաւ պատմութիւնս 'ի ձեռն Աւետիքի որդւոյ Խաչքոյի, Թվ. ՌՀԹ մարտ Թ»։

4. Թիւ 304.

1. Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյն և զօրութեանց նորին։ 2. Մեկնութիւն տեսլեան Յովհաննու թարգմանեալ 'ի փռանգաց։

5. Թիւ 336.

Մաշտոց. «փառք ամենասուրբ Երրորդութեան... գրեցաւ. Մաշտոցս ձեռամբ բազմամեղ և փցուն գրչի Մանուէլի. 'ի ձորս Շհապունեաց 'ի գիւղս Կոքի կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս և սուրբ Խաչերոյն և Վարդանանց սուրբ նահատակացս, 'ի թվականին Հայոց ՋԽԲ, 'ի ժամանակի որ Ըռըստում անուն փաշայն կանգ-

digitised by A.R.A.R.@

նեցաւ և գնաց 'ի վերայ Շարվանայ։ Զըստացող սորա զտէր Վարդան քահանայ և․․․»։

6. Թիւ 337.

Աւետարան համաքարբառ պատկերազարդ և գեղեցկագիր։ Յիշատականն ընդհատի առանց ծանօթութեան 'ի վերայ գըրչին և թուականին. 'ի վերջ մատենին գտանի նոր ձեռօք գրեալ այսպէս․ «Ով գասք սրբասէրք և լուսաւոր մանկունք սուրբ եկեղեցւոյ, յորժամ ընթեռնուք զսուրբ աւետարանն և կամ օրինակելով, աղաչեմ զձեզ կարն մեր այս է. յերես անկեալ աղաչեմ զձեզ մէկ հայր մեղիւ զՆաղաշ խօջասար գրիչս յիշեցէք 'ի թվին ՌՃԾԶ, մայիս ամսոյ ձ»։ «Յիշատակ է Գօրեցի Ընտրօնեկենց Միրիանին և իւր կողակցին․․․ Գրեցաւ ՌՃԾԶ։ Աստուած բարի վայելումն տացէ զայս բժշկարան աւետարանս ամենայնից տրուպ և մեղաւոր քահանայ տէր Աստուածատուրիս, որ զիմ արդար վաստակօք եմ ընկալեալ։ Ցորժամ զայս բժշկարան աւետարանն ըստացաք մեք երկուքին հարազատիկ եղբարքս այսինքն սրբազան եկեղեցւոյ տէր Աստուածատուրս և Գուրգէն եղբայրս 'ի թուին Հայոց ՌՄԽԳ 'ի փրկչին 1797, որ 'ի Թիֆլիզ քաղաք»։

Զկնի աւետարանին Մարկոսի 'ի ձեռն նոր գրչի գրեալ է. «Ի թուին փրկչի ՌՁԾԵ և Հայոցս ՌՄ և Դ 'ի դեկտեմբեր ամսոյ ԺԵ, օրն կիրակին։ Բարեպաշտն արքան Վրաց Թիմուրազն և որդին նորա օրհնեալն Երակլն 'ի քաղաքն Թիֆլիզ, Անտոնինոս կաթողիկոսն Վրաց ազգին որ էր որդի Խասէ պարոնին ինկեցին 'ի կաթողիկոսութենէ որ հրդրար մեղուաս ? սևագլուխայ մորուսն և վարսեր խուզեցին, եսո ածիլեցին և այնպէս խախտարակ 'ի մէջ քաղաքի շիրջեցուցին և քաթոլիկոսի պատրիարքական քող վեր արին հանդերձ վեղարիւն. աքսորեցին 'ի կայրեախի գիւղն, և որքան պատրիարգկայն 'ի Թիֆլիզ և Գորի' արտաքսեցին, և եկեղեցիք ինքեանք կալան։ Ես Գէորգ վարդապետ գրեցի»։

7. Թիւ 338.

Մեկնութիւն Սողոմոնի Առակաց, Ժողովողի, Իմաստութեան և Երգոց երգոյն. սկիզբն պակասի. զկնի ցանկի Առակաց գըրոյն. «Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ, և քաջ գիտապետի, համառօտ հաւաքումն յԱռակաց գրոց Սողոմոնի. 'ի լուսաւոր բանից մեծին Ներսիսի»։ Զկնի ցանկին Երգոց երգոյն. «Համառօտ հաւաքումն 'ի տեսութիւն լուծմանց Երգոց երգոյն, աշխատասիրեալ Գրիգորի հսկողի, արի երջանիկ հռետորի, աշակերտի եռամեծին Յովհաննու Որոտնեցւոյ, 'ի լուսաւոր բանից վարդապետին Վարդանայ»։ Զկնի Իմաստութեան գրոցն. «․․․ Վասն որոյ սուրբն Ներսէս Տարսունայցի 'ի Հոգւոյն Սրբոյ ընկալեալ զլուծումն մեկնութեան Առակացն և գրով անջինջ յիշատակ թողուլ մեզ 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որում փառք․․․»

8. Թիւ 339.

1. Քարոզք 'ի բարբառ ժողովրդական։ 2 Տոմար։ Առանց յիշատակարանի։

9. Թիւ 379.

Գանձարան։ Առանց յիշատակարանի։

10. Թիւ 380.

Բժշկարան։ Առանց յիշատակարանի։

11. Թիւ 381.

1. Ժամանակագրութիւն։ 2. Մաշտոց։

«Ես Սարկաւագ լեհացիս
Թվիս ՌԿ երկուսին (1062)
Հանդիպեցայ Մսիր քաղքիս.
Ով ընթերցողք այսմ տառիս.
Ես Մկրտիչ Տիւրիկեցի
Միայն անուամբ երէց կոչի,
Զայս սաքսիս բռնեցի
Զմեռեալ գրեանքն 'ի հետ նորոգեցի.
Ով որ աւէ Աստուած ողորմի'
Ինքն արքայութեան արժանասցի։

Ի ժամանակս Հոճա Խպրահիմ չահին և Քարիմանին. նոցա ձեռնադրութեամբ և համակրութեամբ կազմեցաք զայս Մաշտոցն. յիշեցէք 'ի մաքրափայլ աղօթս ձեր. ամէն։ Հայր մեր»։

12. Թիւ 382.

Աւետարան։ Յիշատակարանն բովանդակէ զկամս ստացողին. որով զկնի մահուան իւրոյ' աւետարանն գտանէր եղբօր իւրոյ և որդւոյ նորին կտակի։ — «Վերջին կազմող սուրբ աւետարանիս Յովհաննէս աբեղայ։ Կազմեցաւ Հայոց թվին ՋԾԵ, հոկտեմբերի Ժ»։ «Վերատին նորոգող աւետարանին յիշեցէք զՄկրտիչ մականուն երէցս»։

13. Թիւ 403.

1. Ձորս թերթ պատարագի արարողութեան։ 2. Վեց թերթ հին երկաթագիր աւետարանի։

digitised by A.R.A.R.@

14. Թիւ 604.

Ժողովածու խրատական գիրք. «Կատարեցաւ ժողովածու խրատական գիրս ձեռամբ անարժան Թոխաթայի Պաւղոս երիցու որ 'ի մայրաքաղաքս Կոստանդինուպօլիս անկեալ է, և է 'ի դուռն սուրբ Հրեշտակապետ եկեղեցի, 'ի Թաղն որ կոչի Պալատ. Թվին Հայոց ՌՃ և ԺԸ. յունիս ամսո Թ. և օրն Գ շաբաթի»։

15. Թիւ 606. 4°.

1. Վարք Յովհաննու աւետարանչի և այլոց սրբոց։ 2. Ճառք Ոսկեբերանի և այլ աստուածաբանական բանք։

16. Թիւ 607. 4°.

Գիրք պատմութեան Կիրակոսի սուրբ վարդապետի։ Յօրինեալ 'ի վայելս Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց Շիօշ Բէգի որդի, Յովսեփայ արքեպիսկոպոսի Ռուսաց երկրի Հայոց ազգիս, ազգակցի մեծի իշխանացն Զաքարիայի Սպասալարին ամենայն Հայոց և Վրաց և Իվանէի եղբօր նորա, որդւոյն Սարգսի մեծի իշխանին, զորոց պատմէ երանելի վարդապետս այս, 'ի վեց հարիւր քառասուն և վեց թուին մերոյ։ Ի հայրապետութեան լուսանկար աթոռոյն Էջմիածնի Տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց. 1780 յամի փրկչին և 'ի Հայոց ՌՄԻԹ 'ի Հաշտարխան. ձեռամբ Յարութիւն երէցիս Շամախեցւոյ։ — «Այս պատկանի Վահան Պապաջանովին, որ իւրեան մէկ որդին եմ. ինձ շատ կու սիրէր»։

17. Թիւ 60. 8°.

Dictionarium Armeno-Latinum. Amstelodami, 25 januari, 1670. Collecto a Th. Petreo. (Անկատար փոքրիկ առձեռն հայերէն լատիներէն բառարան)։

18. Թիւ 93. 8°.

1. Վեցհարիւրեակ Նւագրի։ 2 Աղօթք Անաստաս պատրիարքի։ 3 Բառգիրք։ Ի սկիզբն ձեռագրին. «Այս գիրք Աստուածաբանութեան վեցհարիւրեակ Նւագրի և Բառարան Հայոց հնագոյն բառից գրեալ 'ի 1620 ամի Տեառն. զոր և ընծայեալ էր սրբազնասուրբ կաթուղիկոսն ամենայն Հայոց մեծն Սիմէօն եղբօրորդւոյն իւրում կնէազ Գէորգ Մելիքսեդեկեան Խուբով Հայոց պրօֆէսորի, կայսերական Աղաբաբովեանց ուսումնարանին Աստրախանայ. որ և ընծայեաց Ներին Բ. Գերազանցութեան Բարոն Հումբոլտին, վասն գրատան արքայապերճ մայրաքաղաքին Բեռլինոյ. 'ի 1829 թուոջ հոկտ. 7, յԱստրախան»։ Նոյնն ռուսերէն։

(Յիշատակարան). «Փառք ամենասուրբ Երրորդութեան . . . Արդ գրեցաւ բառս ձեռամբ անարհեստ գրչի, Մարտիրոսի. 'ի թվականիս ՌԿԹ. և ստացող սորա պտէր Աստուածատուր արհիեպիսկոպոս, որ ստացաւ զսա 'ի հալալ ընչից իւրոց. յիշատակ իւր. և ծնողաց իւրոց. և ինձ մեղապարտ գրչիս. ամէն։

19. Թիւ 94. 8°.

1. Գիրք յաղագս մարդեղութեան Քրիստոսի տեառն մերոյ։ 2 Գիրք յաղագս խորհրդոյն։ 3 Յաղագս գրոցն վասն կատարածի աշխարհի։ Հին յիշատարանն պակասի. 'ի սկիզբն գրոցն է յիշատակարան Խուբով պրօֆէսորին, որպէս 'ի ձեռագրին ընդ համարաւ 93. 'ի սմա ասի. «Այս գիրք աստուածաբանութեան յաղագս մարդեղութեան և այլոց տնօրինութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, գրեալ 'ի 1462 ամի Տեառն, զոր և ընծայեալ 'ի Սիմէօն...» որպէս 'ի վերնում ձեռագրի։

20. Թիւ 95. 8°.

1. Աստուածաբանական և բարոյախօսական ճառք։ 2 Ճարտասանութիւն. ըսկիզբն պակասի. 'ի միջի խօսի զորամաբանութենէ և զհաւաքաբանութենէ։ 3 Արիստոտելի յաղագս առաքինութեանց առ Աղեքսանդր թագաւոր։ 4 Լուծումն բնութեան գրոց Արիստոտելի։ Յիշատակարան ընծայական կնէազ Խուբովի, որպէս 'ի ձեռագիրսն 93 և 94։ Ըստ յիշատակարանի ձեռագրին՝ գրեալ է 'ի ձեռն Միքայելի եպիսկոպոսի 'ի թուին ՌՃԽԷ յամսեանն օգոստոսի ԼԱ։

21. Թիւ 142. 8°.

Մաշտոց երկաթագիր 'ի վերայ թղթոյ։ (Յիշատակարանն պակասի)։

22. Թիւ 167. 8°.

Շարական մագաղաթեայ. «Գրեցաւ եղանակաւոր շարականս այս 'ի թուաբերութեան Հայոց ՊՂՁ, 'ի դառն և 'ի չար ժամանակի յորում՝ նեղիմք յանօրինաց և յանիրաւ պահանջողաց՝ 'ի հայրապետութեան տեառն Գրիգորի 'ի յաթոռ սուրբ Էջմիածնի Վաղարշապատու Արարատեան նահանգի, 'ի խանութեան Ջահան շահի 'ի վանս Աշրիվանս»։

digitised by A.R.A.R.@

23. Թիւ 278. 8°.

1. Օրէնք Կոստանդիանու կայսեր։ 2 Դատաստանագիրք Մի. Գոլ։ 3 Յովհաննէս վարդապետի Երզնկացւոյ Խրատք հաստատակաց քրիստոնէից, քահանայից և ժողովրդոց ի կանոնական սահմանաց առաքելոց սրբոց և հայրապետաց և վարդապետաց, և հօրն մերոյ Վարդան վարդապետի, յորում ամենեսեան ժողովեցի և գրեցի. (անկատար)։ 4. Երեք Թուղթ մագաղաթէ աւետարանի։ — Ի սկիզբն գրոցս «Ընթիթար Գոշ արարեալ է զդատաստանս գիրս ի Թուին Հայոց ՈԼԳ.»։ Ի վերջ գրոցն. «Ի վայելումն Մինաս վարդապետի Եզնկայեցոյ. Թվին ՌՃՁ և Ըին առի։

24. Թիւ 280. 8°.

Ներին ընդդէմ Պաւղիկեանց։ Տաան և հինգ Թերթ նոր նորագիր տառիւք, և անյիշատակարան ձեռագիր։

25. Թիւ 281. 8°.

1. Ներգործութիւն աստուածաբանական առաքինութեանց, հաւատոյ և յուսոյ, և այլն։ 2 Նախապատրաստութիւն սրբոյ պատարագի. 3 Կերպ մատուցանելոյ զպատարագ ըստ դիտաւորութեան հռովմէական կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ։ Առանց յիշատակարանի։

26. Թիւ 282. 8°.

1. Գիրք պատասխանական սրբոյն Աթանասիոսի, Հարցմանցն սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ։ Տպեցեալ ի Հայրապետութեան տեառն Ղազարոսի սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց.... (ի տպարանի չնչին Ովհաննէսի)։ Կնք. Քրիստոսի ծառայ տիրացու Վարդան. 1228։ 2. Առակք և պատմութիւնք զանազան ի պէտս քարոզի, առ ի դիւրաստութիւն ժողովրդեան։ 3. Եփրեմ վարդապետ (հատուած մի)։

27. Թիւ 340. 8°.

1. Ցօնացոյց և ժամամուտ ըստ պատշաճի տուր։ 2 Մեկնութիւն Սաղմոսի (միայն առն մի)։

28. Թիւ 341. 8°.

1. Ցուսարատ։ 2 Թուղթ Պօղոսի առաքելոյն առ Հռովմայեցիս։ 3 Գիրք Աբարածոց։ 4 Խրատական բանք։ 5 Ազօթք, կապք (Քրիստիրէն)։

29. Թիւ 32. 8°.

1. Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին Պարապմունք։ 2. Եռամեծին Յովհաննու Որոտնեցւոյ Հայոց մեծ փիլիսոփայի լուծմունք Պարապմանց գրոց աշակերտելոց իւրոց. հաւաքեալ երկասիրութեամբ (անընթեռնլի) վարդապետի և աշակերտի նորա։ 3 Բանք Դաւթի ընդդէմ հերձուածողաց։ Ցիշատակարան.... «Գծագրեցի յերկրին Որոտնոյ ի գեղջն Շէնհէր. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Յոհաննոսի, յամին հազարերորդի հարիւրորդի վեցերորդի (1106) Թուականութեան աբեթական տանն ի Հայրապետութեան տեառն Յակոբայ»։ Ցիշատակարան հեղինակին... «Ի կերջին բանասիրաց և տրուպս պետաց Գրիգոր կոչեցեալ խնդրող բանի, զոր ի վաղ ժամանակաց տենչացեալ կարօտեաք, յեղակարծ ժամու գտեալ եղև ի յարկեղս գրոց յեկեղեցւոջ առաքելական աթոռոյն Տաթեւոյ... օրինակեցաք ի վարժուն ուղղասէր մտաց։ Որ և ես ըստ խմում կարի տեսեղծ մատամբ գծագրեցի զսա՝ առ ոտս մեծ վարժապետին իսոյ Յովհաննու Որոտնեցւոյ... որում էր Թիւ չորկայութեան տոմարի մեծի Պ և ԻԸ ամի»։

30. Թիւ 33. 4°.

1. Առաքել հռետորի և անպաղթ փիլիսոփայի ի մեկնութիւն Սաղմանաց գրոց։ 2 Այլ բանք մեկնութեան Առաքելի հռետորի (կիսատ)։ 3 Իմաստուն Յովհաննիսի վարդապետին համառօտեալ մեկնութիւն Նեղսիսի Լամբրօնացւոյ պատարագի։ 4 Երկնաբանութիւն և տոմար։ Առանց յիշատակարանի։

31. Թիւ 34. 4°.

1. Կանոնք առաքելոց, հարց սրբոց, ընդհանրական և ազգային ժողովոց և հայրապետաց։ 2 Յանկ հայրապետաց ժողովոյն Նիկիոյ։ 3 Դաւազանագիր կաթուղիկոսաց Հայոց ցԹիւն Հայոց ՆԵԱ. 4 Եպիսկոպոսունք կամաւարական տանն։ 5 Կանոնք Ներսեսի։ 6 Ի Հարանց կանոնաց վասն որ երկրորդ անգամ ամուսնանան։ 7 Կանոնք Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի։

Ցիշատակարան. «Փառք և.... զոր և եռավարեալ սրտիւ և յօժար կամաք ետ գլուխել զսա ի հալալ վաստակոց իւրոց պարկեշտ և ատուածասէր ջահրնկալն Յուսիչայ, խրատով խաչատուր անուամբ միայն բանասիրի. որ և չնորհիւ Տեառն վերատեսուչ մայրաքաղաքին Հալպայ, և եղ ի Հալալ քաղաքի սուրբ Քառասունք եկեղեցին, ձեռամբ նոյն խաչատուր բանասիրի, յիշատակ իւր և իւր ծնողացն... Այդ գրեցաւ սա ի քաղաքս Բերիայ, ընդ հովանեաւ սուրբ

digitised by A.R.A.R.@

Աստուածածնին և սուրբ Քառասունք եկեղեցեացն 'ի Թվականին Հայոց ՌՃ, 'ի հայրապետութեան տեառն Ներսէս կաթուղիկոսին՝ որ յաթոռն Կիլիկիոյ և Փիլիպպոս կաթողիկոսին՝ որ 'ի սուրբ Էջմիածին և յաստուածատուր վարդապետին, ձեռամբ յոգնամեղ գրչի Սահակ դպրի որդւոյ Մելքոն ելրիցու»։ —

«Արդ կազմեցաւ սուրբ տառս կանոնական ձեռամբ սուտանուն Դանիէլ արեղի, 'ի Թվին Հայոց ՌՃ, որ եկագնայի 'ի սուրբ Երուսաղէմ»։ 5 Զիւղաբանութիւն։ Ցաղագս խնամութեան ամուսնացելոց։ Ցկոթ վարդապետի Դրիսեցւոյ արարեալ։

32. Թիւ 268.

Աւետարան. «Ցամին 932 թուին Հայոց 'ի գաւառս Գուգարաց Ա։ խտիք կոչեցեալ, յորում՝ ամի հղաւ չարժ և Ըղնկա քաղաքն տեղով ընկղմեցաւ. մարդով և անասնաբ մինչ ԼՌ մարդի գեր եկաւ»։

33. Թիւ 269. 8°.

Վարք սրբոյ, քաջայեալ և առանց յիշատակարանի։

34. Թիւ 370. 4°.

Մաշտոց. Սկիզբն պակասի. առանց յիշատակարանի։

35. Թիւ 272. 4°.

Աւետարան համաբարբառ. «Գրեաց Ղազար քահանայ 'ի դառն և տաժան ժամանակի, 'ի մեծ Թվականին Հայոց ՌԶԴ 'ի մայրաքաղաքն Ջուղայոյ, 'ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի ամենայն Հայոց և 'ի թագաւորութեան երկրիս Պարսից Շահ Սեֆիոյն»։

36. Թիւ 273. 4°.

Բառգիրք։ Ա Բառք յԱստուածաշնչէ։ Բ Քերթողական բառք։ Գ Թարգմանութիւն պարսիկ բառից 'ի պատմութեան Վարդանայ (Եղիշէի)։ Դ Մեկնութիւն քերականական բառից։ Ե Այլ բառգիրք առանց սկզբան։ Զ Բառք Գայանայոյ։ «Գրեցաւ 'ի ձեռն Մարտիրոս գրչի յընտիր օրինակէ. 'ի Թվականին ՌԿԴ»։ Է Առակք Վարգան վարդապետի։ Ը Բացատրութիւն կշռոց։ Թ Հանդէս բանաստեղծից։

37. Թիւ 274. 4°.

Աւետարան պատկերազարդ համաբարբառ։ «Աւարտեցաւ թվ. ՌՃԻԷ տարվի 'ի Շօշ մայրաքաղաքի և 'ի գիւղաքաղաքն Ջուղայ 'ի Կարապետ գրչէ, 'ի հայրապետութեան Ցակոբայ կաթուղիկոսի, 'ի թագաւորութեան Շահ Ալէմանի»։

38. Թիւ 35. 4°.

1. Իրբև կոչմ երկու թերթ հին մագաղաթեայ երկաթագիր աւետարանի։ 2 Աբրայ Յովհաննու հօրն Դայիթուոյ թուղթ առ Յովհաննէս (կէս տող անընթեռնլի) և առաջնորդն Ս. Թանչիա? լերին։ «Վերագոյ բնութեան և հաւասար հրեշտակաց հօրդ հարց և վարդապետիդ յոյժ վերագունի, մեզուտոր Յովհաննէս առաջնորդ Դայիթայ 'ի տէր ողջոյն։ 3 Աբրայ Յովհաննու առաջնորդի... ինն բան կրօնաւորական։ Ցաղագս ունայնութեան կենցաղոյս, և վասն հրաժարելոյ և մեկնելոյ յաշխարէէ։ 4 Սրբոյ հարն Սիսէի որ... (անընթեռնլի) զոր գրեաց Դանիէլ կրաւնաւորն միայնակեաց Դայիթայ լերին։ (Դորձ յոյժ ոգեաւ գրչի և լի սխալանօք)։ «Գրեցաւ 'ի Թվին ՊԺ»։

39. Թիւ 133. in-folio.

Միքայէլի պատրիարքի Ասորոց համառօտ ժամանակագրոյցք. քաղուածս արարեալ 'ի յոլովից պատմագրաց 'ի վարժս բանասիրաց, ժամանակ տեղեկութեան. յԱդամայ հետէ մինչև յետին աւուրս թագաւորացեալ։ — Ցուցակ հայ կաթուղիկոսաց շարունակեալ 'ի Վարդանայ։ (Գրեալ 'ի 1854 ամի)։

40. Թիւ 134. in-folio.

1. Ցիսուս որդի։ 2 Երկոտասան մարգարէք։ 3 Թաղումն։ «Ցիշատակ է Ցիսուս որդի և Երկոտասան մարգարէից պատմութիւնս և թաղումն՝ Շաւօթցի Արզանուոյ, թվ. ՌՃՄԵ»։ «Ցիշատակ է Ցիսուս որդիս և Երկոտասան մարգարէից պատգամ և թաղումն՝ Շաւօթցի Արզանուոյ թաթոսի որդի մահտեսի Սահակին։ Թվին ՌՃԼԳ յուլիս ամսոյ մէկին»։ 4 Երկու մեծագիր թուղթ երկաթագիր։ երևի մեկնութիւն աւետարանի լինել։

41. Թիւ 135. 4°.

Բժշկարան. սկիզբն պակասի։ «Այս գիրքս Ջուղայ է գրած՝ ձեռամբ տէր Յոհաննին. զոր է լիար և նուէի կը հրամայէ. գիտացիր որ լիարն է չի տրամ, և մէկ նուէին ի տրամ»։

42. Թիւ 136. 4°.

1. Առակք Սողոմոնի։ 2 Ցեառն Ներսեսի յիշատակարան Առակացն Սողոմոնի, զոր լեր ձեռամբ գրեաց զարթուցանել զքնմ

digitised by A.R.A.R.@

րեալս մեղօք․ Ոտանաւոր այբբենական։ 3 Մարգարէութիւն Եսայեայ․ «Գրչակ մեղաւոր Գրիգոր յիշեցէք․ գրեցաւ թուին ՌՃԾ յերկրին Հնդկաց»։ Այլ ձեռօք․ «Գրուեցաւ 'ի թիւն ՌՃԾԵ, յունուարի բ»։ 4 Թուղթք առաքելոց։ 5 Յայտնութիւն Յովհաննու։ 6 Ընթերցուածք 'ի Գործոց առաքելոց։ 7 Աւետարան։ 8 Յառաջաբան թղթոյն Պօղոսի առաքելոյ և թուղթք․ անկատար։

43. Թիւ 137. 4°.

1. Այսուքիկ են եօթանասուն ազգք և լեզուք։ 2 Երկոտասան ամիսք յատկութեամբք իւրեանց։ 3 Երկոտասան դրունք հաւատոց (ցանկ)։ 4 Ծառ Արիստոտելի իմաստասիրութեան։ 5 Ճիւղաբանութիւն գոյացութեանց։ 6 Անուանք երկոտասան հողմոց։ 7 Ցեղք Իսրայէլի 'ի շրջագծի բոլանդակեալ։ 8 Տօմար, (գրեցաւ 'ի թուին փոքր Ա․ ՃԻԱ․)։ 9 Համառօտ բացատրութիւն խորհրդոց 'ի Գէորգայ Քոչարեցւոյ Ջուղայեցւոյ․ Ստացաւ Ա․ ՃԻԱ․ փոքր թուին, ՇԻԹ թուումն?։ 10 Պատմութիւն եկեղեցեացն Խարբերդու, յորոց Տաճիկք զ'Գ առնուլ կամէին (անկատար)։

44. Թիւ 138. 4°.

Աւետարան երկաթագիր 'ի վերայ մագաղաթի պատկերազարդ, համաբարբառ․ հանդերձ նամակաւ Եւսեբի առ Կարպիանոս։

45. Թիւ 139. 4°.

Քարոզագիրք․ ա Նախերգանք և յառաջաբանութիւնք քարոզից, որք առնել պատշաճին յայնժամ տեղիս ուր քան զատողն մեծագոյն և գլխաւոր գտանիցի, և հրամայող իսկ քարոզչին։ բ Երեք քարոզք 'ի վերայ գերազանցութեան աթոռոյն Էջմիածնի։ գ Նորին Սիմէոն վարդապետի քարոզ վասն սրբալոյս և աստուածագործ միւռոնին, արտահանեալ 'ի սրբոյն Դիոնեսիոսէ և սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյ։ դ Նորին քարոզ վասն եկեղեցական քահանայապետութեան մերոյ․ արտահանեալ 'ի սրբոյն Դիոնեսիոսէ և յայլոց աստուածային գրեանց, 'ի բան սրբոյն Պօղոսի՝ եթէ Քրիստոս է միջնորդ Աստուծոյ և մարդկան։ ե Քարոզ 'ի վերայ Ողջունի։ զ Քարոզ 'ի վերայ բանից Ելից, «Ես առաքեցից զքեզ յԵգիպտոս»։ Այլ իմն ոճ դասեալ 'ի նոյն բան, թէ «Ես եմ Աստուած որ էն»։ Դարձեալ այլ իմն ոճ արարեալ 'ի սոյն, 'ի նոյնոյ շարադրողէ։ — Դարձեալ 'ի նոյն։ (Անկատար և առանց յիշատակարանի)։

46. Թիւ 140. 4°.

«Գիրքուկ ինչ զբօսանաց, շարադրեալ 'ի յումեմնէ մեծամեծ քահանայէ 'ի կարգէ լուսաւորչազգաւան և ուղղափառ ազգէ, 'ի Ջուղայ, Շօշ կոչեցեալ Սպահան քաղաքի․ ընդ հովանեաւ սրբոյն Յովհաննու Կարապետի, Աստուածածնի անուամբ եկեղեցւոյ առաձայնելոյ։ Ի հայրապետութեան տեառն ամենից Հայոց Ղուկասու սրբազան կաթուղիկոսի, ինքնագլուխ հովուապետի և փոխանորդ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի։ Եւ յառաջնորդութեան 'ի Ջուղայ Մըկրտիչ սրբազան աստուածաբան արքեպիսկոպոսի։ Եւ յորդորմամբ թիկնաւէտութեան հոգևորականի հօրն իմոյ տէր Մինասայ խոհեմազարդ քահանայի որդւոյ տէր Յովհաննէսի, Սէրվէտենց կոչեցելոյ։ յամի տեառն 1783, մայիսի 2․ օժանդակութեամբ Հոգւոյն Սրբոյ»։ Անուն հեղինակին է տէր Կարապետ՝ ըստ սկզբնատառից ոտանաւորացն։ Աւարտեալ է 'ի 1783 ամի, 25 յուլիսի։

47. Թիւ 141. 4°.

Գիրք ժողովածոյ։ Բովանդակէ զամենայն ուսմունս վանականս, և երևի լինել առձեռն դասագիրք։ Բովանդակութիւն․ Վեցօրեայ արարչութիւն․ Կենդանակերպից բաժանումն․ մոլորականք, տարեմուտք։ Չորից աւետարանչաց, ․․․ հաւատոյ մասունք ․․․ բանք իմաստասիրաց ․․․ վասն երկնային շարժմանց, վասն ջուրց և ծովուց․ եղանակք տարւոյն․․․ Բազմաթիւ յիշատակարանք յայլ և այլ ժամանակս գրեալ, յորոց մին ստացողի գրոյս լինել թուի․ «Ի թուին Հայոց ՌՄԽԲ նուաստ տէր Կարապետ գնացի Տաթեւու սուրբ վանքն․ ձեռնադրեաց Յովակիմ արքեպիսկոպոսէն, որ էր առաջնորդ այն ժամանակին։ ԽՋ թուին եկի 'ի Թարվէզ բնակեցայ․ Ծ^ն այս օթաղս շինեցի․ ԾՋ թուին զուգակիցն հիւանդացաւ․ գնաց Ղարատաղ և անդ վախճանեցաւ, և էր անուն նորա Նարծաղիկ․ որոյ 'ի թվին ՌՄԿՋ^ն այս կանոնական գիրքս յիշատակ ետու իմ եղբայր Պետրոսի որդի Անդրէասին․ Աստուած իւր շնորհն տայէ նմա որ իմ տեղն նորէն պահէ»։ Այլ յիշատակարան պատմական․ «Ի թվին ՌՃԽ օգոստոսի ԺԸ, եղև փոխումն Եղիազար կաթուղիկոսի․ և օգոստոսի ԻուՄն օծումն Նահապետի»։

48. Թիւ 142. 4°.

Քարոզք և այլ բանք աստուածաբանականք։

digitised by A.R.A.R.@

49. Թիւ 143. 4°.

Բժշկարան. «Ի Թվին Հայոց ՌՃԼ. մարտի ամսի ԺԷ 'ի քաղաքն Գանձայ, ես ես Քրիստոսի նուազ ծառայ Ջուղայեցի խօճայ Պօղոսի որդի Յակոբիանս, այս քանի չաբրաներէն որ ներքև կարգով գրուած է 'ի Պարսից հէքմարանն վերի? Գրգմանեցի 'ի Հայոց բառն. զայս տեղագրեցի. ով հանդիպի սմայ կարդալով կամ օրինակ առնելով՝ մէկ Հայր մեզոյ ասէ վասն մեզուորիս համար»։

50. Թիւ 144. 4°.

1. Գրիգոր Նարեկացի. «Ցիչատակարան Նարեկացւոյ» (ոտանաւոր). Գրեալ 'ի յաւարտումն իններեակ յոբելեանի 'ի սկիզբն պսակելոյ մոր տասնեկին յաբեթեան ազգի տումարի». ըստ լուծողի բանիցն Նարեկացւոյն յամին ՆԼԲ 'ի հայրապետութեան՝ Վահանայ։ 2 Վարք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն։ 3 Լուծումն բանից Գրիգորի Նարեկացւոյ։ «Արդ գրեցաւ յերինաչու և աստուածանշոյլ տառս՝ ձեռամբ ապիկար և սուտանուն Բարսեղ եւեթ կրօնաւորի, 'ի գուռն Ամենափրկչի սուրբ ուխտին 'ի Շօշ քաղաքի, որ յոյժ-ջրջի խապան. 'ի Թուականութեան հայկազնեան սեռի հազար հարիւր և տասնեւչորս (1114) ամին, տարիւն ԺԵ և Գ։ Ի Թագաւորութեան Պարսից Փոքր Շահաբասին, որ էր խնամածու Հայոց ազգիս, 'ի հայրապետութեան Յակոբ կաթողիկոսի»։

51. Թիւ 145. 4°.

Բառգիրք։ Բացատրութիւնք Աստուածաշնչի երբայական և յունական բառից. Բառգիրք չափաբերական բառից, Գալենոսի, և այլն։ Գրեցաւ 'ի Թուխ Հայոց ՌԾԱ։

52. Թիւ 146. 12°.

1. Ժամագիրք։ 2 Արարողութիւն պատարագի։ 3 Ցաղք Նազարայ եպիսկոպոսի և այլոց։ 4 Հարցմունք և պատասխանիք։ Առանց յիշատակարանի։

53. Թիւ 147. 12°։

1. Երկու Թուղթ խրատական բովանդակութեամբ. սկիզբն պակասի։ 2 Խրատ խիկարայ զոր ասաց Նադանայ քեռորդոյ իւրոյ։ Ի վերջ խրատուն. «Եղբայր, պատմութիւն ոչ գրեցաք՝ զի օրինակ ոչ գայր։

Այս է խրատ իմաստասիրի
Որոյ անուն խիկար կոչի.
Սա էր գովիր մեծ արքայի
Որ Սենեքերիմ անուն կոչի.
Բանքս այս է իմանալի.
Բաղում մարդոյ օգուտ լինի.
Գրող խրատուս պարզաքանի
Պետրոս որդի Բարսխամի»։

3 Պատմութիւն եօթն իմաստասիրաց և փոնդիոս արքայ Հռովմայ, և այլն։ Գրեցաւ 'ի Թուին ՌՃ և Է, Համիր ամսոյն Է։

54. Թիւ 148. 12°.

Համառօտ գումարումն և լուծումն բանից յաստուածաշունչ գրոց. յումմինէ յերեմիայ բանասիրէ։ «Ի Թուականութեանս Հայոց ՌՃԽ 'ի սեպտեմբերի Ը, 'ի ԺԹ աւարտեցի 'ի Շօշ, 'ի Թագաւորութեան Շահ Սէֆիին և 'ի գիտասէրութեան Եղիազարու»։

55. Թիւ 149. 12°.

Փոքրագիր զարդարեալ Աւետարան, կոչեցեալ Գրպանի Աւետարան. Հանգիստ Յովհաննու։ «Գրեցաւ յԱմիթ 'ի Թագաւորութեան Ցանկաց Սուլթան Մուրատին տղայ հասակաւ. ժողովեցին ՀՌ գումար, դնացին 'ի վերայ Բարելոնի. վերջն Աստուծոյ է յայտնի. 'ի Թվին ՌՀԵ»։

56. Թիւ 150. 12°.

Տօնացոյց. առանց յիշատակարանի։

57. Թիւ 151. 12°.

Շարագրութիւն կանոնաց, անկատար. առանց յիշատակարանի։

58. Թիւ 152. 12°.

1. Պատմութիւն արքայորդւոյն Յովասափու։ 2 Ցաղք. սկիզբն պակասի. տաղ Նազարէի տասցեալ 'ի վերայ զարիպի։ Ե Այլ տաղ գեղեցիկ Նազարէի ասացեալ 'ի Մերտին 'ի Հայոց ՉԺԸ թուին։ Գ Աղուէս և Գայլ։ Դ Բիբուլն և վարդն։ Ե Այբբենական ոտանաւոր։ Զ Ոտանաւոր նկարագիր. տարագրութիւն Հայոց 'ի Շահապաղայ, 'ի Թուին Հայոց ՌԾԳ։ Առանց յիշատակարանի։

59. Թիւ 153. 12°.

Աղմոսարան և աղօթք երեկոյեան ժամու։ Առանց յիշատակարանի։

60. Թիւ 154. 4°.

1. Բառարան Աստուածաշնչի ըստ գրոցն կարգեալ. Գիրք Ելից. Աւետարան Յովհ։ 2 Գումարումն յոգնագիմի իրողութեանց սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի և այլոց իմաստասիրաց, 'ի Մովսէս ումմնէ։

digitised by A.R.A.R.@

ըստ տասից դասակարգութեան չարա-գրեալ։ 3 Պնտանք քաղաքաց։ 4 Աչխար-հագրական նկարագիր (անկատար)։ 5 Բա-նական հոգին յերից մասանց։ 6 Մեկնու-թիւն Եղիայի? 7 Հարցմունք և պատասխա-նիք։ 8 Մեկնութիւն Սողոմոնի անկատար։ «Ցայսմ հետէ մնան քանքս առանց մեկնու-թեան ի Հիպոլիտեայ. թէ ի մեկնչէն ան-միոյթ արարած, և թէ գրողէն, ոչ գիտեմ. բայց սրբոյն Ներսիսի Տարսոնացւոյ գիրքն լցեալ ի յօգուտ և ի վարժ մանկանց Սիովնի»։ 9 Ցաղկաքաղ հաւաքեալ ի բանից Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանի մեկ-նութենէ։ 10 Յիրանեիւլոյն Սարգսի չնորհա-լից վարդապետի բանք ժողովեալ ի կարու-զիկէից մեկնութենէ։ 11 Գրիգորի Տաթե-ւացւոյ Հարցմանց գրոց ժողովեալ։ 12 Ալ-իրքի գրոց ժողովեալ, ի նոյնոյ Աղեքսան-դրէ քանի ծառայէ աստուածաբանութեան։ 13 Տօմար։ «Ցիչատակ է մատեանս Դա-ւիթ վարդապետի Զուայեցւոյ, առաջնոր-դի և վերակացուի Սուրբ Ամենափրկիչ վանացս, ի Թուին ՌՃԿԴ գնեալ։ 14 Բանք առաքինութեանց, թարգմանեալ ի փռան-գաց. թուղթ մի։ Թիւ ի վերայ կաչէկազմին ՌՃԽԼ։

61. Թիւ 135.

Ժողովածոյ մագաղաթեայ և թղթեայ հին և նոր երկաթագիր թղթոց։ 1. Ա. Եր-կու թուղթ հին երկաթագիր պատմութեան Գրիգորի Լուսաւորչի, բովանդակէ զդար-ձրն ի Կեսարիոյ (յԱգաթանգեղեայ)։ 2. Երկու և կէս թերթ մագաղաթեայ աւե-տարանի։ 3. Երկու թուղթ հին ժամագրոց։ 4. Հատուած մի ի վարուց սրբոց։ 5. Եր-կու թուղթ ճաշոցի։

Բ. 1 Բազմաթիւ հին մագաղաթ և թուղթ աւետարանի և Աստուածաշնչի թերթք։ 2 Մեկնութիւն Դանիելի (երկու թերթք)։

Գ. 1 Մի կտոր մագաղաթեայ չարակա-նիր։ 2 Երկու թուղթ վրացերէն աւետարանի։

Դ. 1 Թերթ մի տպագիր առակաց գրքի մոյ։ 2 Թերթ մի մաշտոցի։ 3 Քանի մի թերթք արաբերէն։

62. Թիւ 259.

1 Տօմար։ 3 Քարոզք։ 3 Երաշաւոյց։ 4 Պատմութիւն Յովասափ արքայորդւոյն։ 5 Պատմութիւն Պղնձէ քաղաքի (սկիզբն պա-կասի)։ 6 Շարականք. Առանց յիշատակա-բանի։

63. Թիւ 260.

Շարական և Տօնացոյց։ Առանց յիշատա-կարանի։

64. Թիւ 261.

Աւետարան համաբարբառ։ Առանց յի-չատակարանի։

65. Թիւ 262.

Մագաղաթեայ հին քաղաքացեալ Սաղմո-սարան։ Առանց յիշատակարանի։

66. Թիւ 263.

Շարական։ «Այդ գրեցաւ եղանակաւ տասքս ի Թուականին Հայոց ՌՃԺԵ ի Հայ-բապետութեան Ցակոբ սրբազան կաթու-ղիկոսի ի Զուղայ, և ի թագաւորութեան Պարսից փոքրիկ Շահսէվնուն. յայսմ ամի թագաւորեցաւ։

67. Թիւ 264.

Մաշտոց։ Առանց յիշատակարանի։

68. Թիւ 265.

1. Վարք սրբոց քաղաքացեալ, անակիզն և անկազմ։ 2 ի վերայ առաքինութեան։ 3 Վասն խորհրդոց։ 4 Վասն մեղայ։ Առանց յիշատակարանի։

69. Թիւ 266.

Աւետարան. «Գրեցաւ ի թվին Հայոց ՌՃԾԹ, սեպտեմբեր ամսոյ ա»։

70. Թիւ 267.

Գիրք Աղաքինութեանց հաւաքեալ ի Ֆրա Պարտէ? ի կարգէ Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի։ ի վերայ կազմին. «Ցիչա-տակ է պարոն Գրիգորի Թվ. ՌՃԽԲ»։

71. Թիւ 275. 8°.

1. Մաշտոց. «Տէր Սահակ գրեաց ի հայ-բապետութեան Փիլիպպոսի կաթուղիկոսի, երկրորդ լուսաւորչի, ի թագաւորութեան Փոքրիկ Շահապուղին, ի թվականին Հայոց ՌՃ և Գ մարտ ամսոյ ԺԲ ի Շօշ»։ 2 Նա-դաշի Ղարիպի երգոյն մի կտորն։

72. Թիւ 276. 4°.

Մաշտոց. Օրհնութիւն եկեղեցւոյ, խաչ, պատկերի, և այլն։ Այլ ձեռք. «Թիւն 1269 գրեցի, գծող սորին Թէոդոս»։

73. Թիւ 277. 4°.

Գիրք մեղութեանց, գրեալ ի տէր Յովա-սափ ի տանէ Սիւնեաց, ի Տաթևայ մեծի վանացս, ի կարգէն Քարոզողաց։ — Ըստ ոտանաւոր յիշատակարանի գրեալ յամին 1141 թուականութեանն Հայոց։

digitised by A.R.A.R.@

74. Թիւ 278. 4°.

Մաշտոց քայքայեալ առանց յիշատակարանի։

75. Թիւ 279. 4°.

Աւետարան համաբարբառ։ Յիշատակարանն կիսատ և առանց Թուականի։

76. Թիւ 280. 4°.

Մաշտոց։ Առանց յիշատակարանի։

77. Թիւ 281. 8°.

. Աւետարան պատկերազարդ։ Առանց յիշատակարանի։

78. Թիւ 282.

Նուաստ և յետին աշակերտի Մաթէոսի եռամեծացն Յովհաննու և Գրիգորի աշխատասիրած հաւաքումն բանից յաւետարանէն Ղուկասու. և քարոզք յոլովք 'ի վայելումն մանկանց Հայաստանեաց։ Առանց յիշատակարանի։

79. Թիւ 283. 4°.

Աւետարան։ «Գրեցաւ 'ի Շօշ քաղաքի կոչեցեալ Սպահան 'ի գիւղաքաղաքն Ջուղայ, 'ի Թագաւորութեան Շահ սուլթան Յուսէյինին, 'ի կաթուղիկոսութեան Ստեփաննոսի. 'ի Թուականութեան ՌՃԽԴ. 'ի ձեռն Սարգիս քահանայի»։

80. Թիւ 284. 12°.

1. Սաղմոսարան։ «Գրեցաւ նրգս սուրբ մարգարէին Դաւթի, 'ի լաւ և յընտիր օրինակէ որ կոչի Գառնեցի, 'ի Ղազար գրչէ. 'ի վանս սուրբ Օգսենդի, 'ի քաղաքն Սէչով. 'ի հայրապետութեան տեառն Մովսէս կաթողիկոսի, 'ի Թագաւորութեան երկրիս Ուլախաց Աղէքսանդրին, 'ի Թվականին Հայոց մեծաց ՌԿԹ. ապրիլ ամսոյ Թն աւարտեցի»։

81. Թիւ 285. 8°.

Աւետարան։ Գրեալ 'ի Թումա Մարաղացի քահանայէ 'ի գիւղն Ղարամանիս, 'ի Թուին Հայոց ՊՋԱ։

82. Թիւ 286. 4°.

1. Ժամագիրք. Սկիզբն և վերջն պակաս։ Սաղմոսք. — Տօնացոյց։

83. Թիւ 287. 4°.

1. Մարգարէութիւն Եսայեայ։ — 2. Թուղթք Պաւղոսի. «Բայց գրեցաւ սա 'ի Թուաբերութեանս Յաբեթական տումարի ՊԷ, և 'ի գալստենէ կենարարին ՌՑԾԸ. 'ի յաշխարհիս Հոնաց և յերկրիս Խրիմի, 'ի Հոյակապ և 'ի հռչակաւոր քաղաքին որ կոչի Սուրխաթ..... ի Թուականութեան յաբեթական տումարի ՌԽԱ ամի և 'ի ծ հոկտեմբերի 'ի Լով քաղաքի»։

84. Թիւ 288. 4°.

Աւետարան պատկերազարդ (պատկերք չորս աւետարանչաց և 11 այլ պատկերք). «Գրեցաւ աւետարանս 'ի ձեռն Թորոս գպրի, 'ի Թվականին Հայոց ՌԾ»։ Այլ ձեռք. «Ես մոլորեալ ոչխարս Աղաջան գրեցի. ով որ կարդայ մէն բերան ողորմի տայ. Քրիստոս իւր հոգուն ողորմի, ամէն։ Գրվեցաւ փոքր Թուին ՋԳ. Օկդան Ե»։

85. Թիւ 289. 4°.

Գրիգորի եռամեծի աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ Հարցմունք պատասխանիք և օգտակարք գրոց աշակերտեալ անձանց։ «Ես Վարդան որդի Մարտիրոսի զայս Տաթեւացոյ Հարցմունքն օրինակեցի, Թվին Հայոց ՌՃԾԳ. փոքր Թուին ՋԹ. Նաւասր գումն զայս գրեցի»։

86. Թիւ 290. 4°.

Քարոզագիրք. «Երկրորդ հատոր քարոզիս։ Աւգնեա Հոգի Սուրբ Աստուած»։ — Յիշատակ է Տէր Սիմէօն քահանայի կողակցին... Սիմէոն վարդապետէ, որ 'ի Թվին ՌՃԿԸ և փետրուարի ժԴ հանգեալ 'ի Քրիստոս, որ է եղբայր Մովսէս վարդապետի»։

87. Թիւ 291.

Աւետարան պատկերազարդ. «Գրեցաւ Թվին Հայոց ՊՂԹ. 'ի հայրապետութեան տէր Գրիգորիսի, 'ի ղանութեան Թավրիզոյ Ջհանշըհի»։ Ծաղկողն կոչի Մկրտիչ։

88. Թիւ 292.

Գիրք յաղագս Առաքինութեանց։ Յառաջաբանն. «... վասն այսորիկ ես նուաստ Ֆրա Պետրոս 'ի կարգէ Քարոզողաց երանելոյն Դոմինիկոսի, կամեցայ հաւաքել զբանս ինչ առաքինութեանց որ սփռեալ կայ 'ի գիրս»։ Գրեցաւ 'ի Ջուղայ, յամին ՌՃԹ Թվին Հայոց։

89. Թիւ 293. 4°.

Տօնացոյց։ — «Կատարեցաւ Տօնացոյցս ընտիր և ըստոյգ օրինակէ, 'ի Թուականութեան մերոյ ՌՃԾԲ յամսեանն նոյեմբեր. 'ի Շօշ, այժմ Սպահան. 'ի Ջուղայ գիւղաքաղաքի. 'ի Թագաւորութեան Յուսէնին և 'ի

digitised by A.R.A.R.@

դիտապետութեան Հայոց հանուրց սեռից Տեառն Ստեփաննոսի հանգուցեալ առ Քրիստոս. և 'ի վերատեսչութեան նահանգիս Պարսկաստանի արհի եպիսկոպոս Տեառն Աղեքսանդրի »: 2. Վասն երակ առնել (թուղթ մի)։

90. Թիւ 117. 4°.

Շարական։ Առանց յիշատակարանի։

91. Թիւ 118. 12°.

1. Տօնացոյց։ 2 Շարականք և աղօթք առաւօտու։ 3 Մեղայք։ Առանց յիշատակարանի։

92. Թիւ 440. 4°.

1. Գանձարան։ 2 Խրատ ողեշահ Նորընծայ քահանայից։ 3 Ժամամուտք։ Գրեցաւ 'ի Թուին Հայոց ՌՉԹ. հոկտեմբերի ԺԲ։

93. Թիւ 160.

Miscellanea. — 1. Epistola Armenica. Նամականի հայկական։ Երկու հայերէն նամակք գրեալ յամին ՊԷ (նոր Թուական Հայոց?) յաշխարհականէ ումեմնէ առ վարդապետ ոմն, որպէս Թուի 'ի Հնդկաստանէ յԵւրոպա։ 2 Մալաբարեան և Անգղիական ձեռագիր Թուղթ մի համդերձ մեկնութեամբք 'ի բարբառ գերմանական։

94.

Շարական։ Առանց յիշատակարանի։

ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ ՄԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ ՀՆՉՄԱՆ ԵՒ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌ ՄԵԾ. ԽՄԲԱԳԻՐՆ

ՄՇԱԿ ԼՐԱԳՐԻ

Այն տողերս գրած թուականէս (սեպտեմբեր 5) գրեթէ երկու ամիս առաջ՝ զանազան կողմերէ յազգային հրաւէրք ընդունեցաւ Բազմավէպ Հանդիսարանի խմբագրութիւնն, իւր կարծիքը յայտնելու հայկական տառից ներկայմամբ տեղի ունեցած բանակռուոյն աղթիւ ընդ Ռուսահայս և ընդ Տաճկահայս։ Մեք ստիպեալ լինելով սպասելու Բազմավէպ Հանդիսարանի լոյս տեսնելու ժամանակութեան, նոյն ժամանակ չկարողացանք գոհացընել զուսումնասէր հարցանողս, որոց խընդիրը կատարելու նպատակաւ այժմ հետևեալ համառօտ տողերը կը գրենք, յորս առանց երկար բացատրութեանց մեր կարծիքը պարզօրէն յայտնած կը համարինք, թողլով յարմարագոյն առթի՝ զայնս լաւագոյն հետազօտութեամբք հրատարակելու։— Բայց որովհետև յարձակողական մասը Մշակի Մեծ. Խմբագիրն ընտրեց, մեզ կը մնայ դրել 'ի մեր նպաստ պաշտպանողաբար, և ծանօթացընել՝ որում ինքզինքն անծանօթ կը ցուցընէ Պր. Գրիգոր Արծրունի։— Ահաւասիկ այս մասին իւր խօսքերն, զորս կը քաղեմք Արևելք լրագրի 688 թուոյն մէջ վերատպեալ հատուածէն, զայն առձեռնպատրաստ ունելով։

«Մեր (Ռուսահայոց) գրական լեզուն մշակվում է ժողովրդի խօսած «կենդանի լեզուի, կենդանի բարբառի ձևերի վրայ. Նրանից ենք մենք քաղում մեր նիւթերը, որպէս կենդանի «և անսպառելի աղբիւրից, այն ինչ «կոստանդնուպօլսի լեզուն չինծու, ա-«րուեստական է, նոյնքան կզզիացած «է՝ որքան կզզիացած է ինքն կոստան-«դնուպօլիս քաղաքը։ Կոստանդնու-«պօլսի Հայերը և նրանց ուսուցիչները «(sic) վենեցիայի Մխիթարեանները՝ «այն աստիճան կզզիացած են, որ մինչև «անգամ մոռացել են՝ թէ ինչպէս են «արտասանվում Հայոց այբբենարանի «տառերը։ Նրանք արդէն մոռացել

digitised by A.R.A.R.@